Գլխավոր տեղեկություն	
Համար	N 184-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (07.07.2021-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2021.06.28-2021.07.11 Պաշտոնական հրապարակման օրը 06.07.2021
Ընդունող մարմին	Ախթալա համայնքի ղեկավար
Ընդունման ամսաթիվ	16.09.2020
Ստորագրող մարմին	Համայնքի ղեկավար
Ստորագրման ամսաթիվ	16.09.2020
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	07.07.2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 184-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 15-ի «Ախթալա համայնքի 2020 թվականի բյուջեի փոփոխություն կատարելու և փոփոխված բյուջեն հաստատելու մասին» թիվ 61-Ն որոշումը՝

Որոշում եմ՝

1. Հաստատել Ախթալա համայնքի 2020 թվականի փոփոխված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1-2/։
2. Հաստատել Ախթալա համայնքի բյուջեի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՉՅԱՆ**

Պաշտոնական հրապարակման օրը՝ 6 հուլիսի 2021 թվական: